ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆ

Մրցունակ մասնավոր հատվածում աշխատատեղերի և յուրաքանչյուր մարդու աշխատանքային եկամուտների զգալի ավելացմանն ուղղված քաղաքականությունների շրջանակն ամփոփվում է մրցունակության բարձրացման գաղափարի ներքո, որի հիմքում ընկած է արտադրողականության աճը: Միջազգային վարկանիշային գնատականները թիրախային ուղենիշներ են ծառայում տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության օրակարգի ձևավորման համար, ուստի մի շարք վարկանիշեր գտնվում նախարարության մշտադիտարկման տիրույթում: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում արձանագրվել է հետևյալ պատկերը.

- Գործարարությամբ զբաղվելը ինդեքսում Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 41-րդ տեղը՝ արձանագրելով դիրքի առաջընթաց 6 կետով:
- Գլոբալ մրցունակության ինդեքսում Հայաստանը 140 երկրների շարքում զբաղեցրել է 70-րդ տեղը՝ արձանագրելով դիրքի առաջընթաց 2 կետով:
- Ներառական զարգացման ինդեքսում Հայաստանը 74 զարգացող երկրների շարքում զբաղեցրել է 45-րդ տեղը՝ նախկին 50-րդ տեղի դիմաց (79 երկրների շարքում):
- Լոգիստիկ ինդեքսում Հայաստանը զբաղեցրել է 92-րդ տեղը 160 երկրների շարքում՝ բարելավելով իր դիրքը 49 կետով:

Մրցունակության բարձրացման համատեքստում իրականացված աշխատանքներ

- Ներդրումային ծրագրի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գումարների վճարումը 3 տարի ժամկետով երկարաձգելու միջոցով աջակցություն է ցուցաբերվել 19 ծրագրի: Դրանցով նախատեսվում է 72.8 մլրդ դրամի ներդրումների իրականացում և շուրջ 1470 աշխատատեղերի ստեղծում:
- Օրենսդրական առաջարկություններ են նախագծվել՝ ընդլայնելու սահմանին ԱԱՀ-ից ազատվող այն հումքի, նյութերի, սարքավորումների ցանկը, որոնք ներմուծվում են մշակող արդյունաբերության մեջ օգտագործելու համար:
- Ներպետական համաձայնեցման գործընթացում է «ԵԱՏՄ շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գործարքների իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ» համաձայնագիրը, որը հնարավորություն կտա ապահովել ոսկերչական իրերի հարգորոշման արդյունքների փոխճանաչելիությունը:
- Կարևորելով «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի կողմից բարձրացված՝ ԵԱՏՄ շրջանակներում «HEETS» ծխախոտային ապրանքատեսակի կանոնակարգման հարցը, հայկական կողմը ԵԱՏՀ է ներկայացրել ԵԱՏՀ միասնական ցանկում ապրանքատեսակի սահմանման, ինչպես նաև ԵԱՏՀ համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու առաջարկներ:
- Իրականացվել են Հայաստանի ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրման ու ոլորտի կարողություններ գույքագրման աշխատանքները: Ներկայումս գործում է http://www.engineering-armenia.am կայքը, որտեղ հասանելի է ինժեներական և բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպությունների գույքագրման արդյունքները ներառող տվյալների բազան:
- «Մայքրոսոֆթ» ընկերության հետ համատեղ քննարկվել են Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքի վրա Հայաստանում «Մայքրոսոֆթ»-ի հետազոտությունների և մշակումների կենտրոնի ստեղծման ուղղությամբ:
- ՀՀ և ՌԴ արդյունաբերության ոլորտում կոոպերացիոն զարգացման աշխատանքային խմբի առաջին նիստի ընթացքում ստորագրվել են Հայ-ռուսական արդյունաբերական ձեռնարկությունների կոոպերացիոն համագործակցության միջոցառումների ճանապարհային քարտեզը. կոոպերացիոն կապերի զարգացում մեքենաշինության և սարքաշինության ոլորտներում, համատեղ ձեռնարկությունների ստեղծում շինանյութերի արտադրության ոլորտում, միասնական արտահանման ուղղվածության համագործակցություն:

Գործարար միջավայր

- ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագիրը, որի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները ամփոփվել և ներկայացվել են ՀՀ վարչապետի և ՀՀ նախագահի աշխատակազմեր՝ ամսական պարբերականությամբ:
- Ուսումնասիրվել է առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից վաճառողներին վաճառատեղերի տրամադրման գործընթացը, կազմակերպվել են շրջայցեր, քննարկվել են տվյալ ոլորտում առկա խնդիրները, առաջարկվել են լուծումներ, դրա արդյունքում մի շարք առևտրի իրականացման վայրերում գործող վաճառատեղերի վճարների գումարները իջեցվել են 20%-ով:
- Մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնք ուղղված են.
  - Սպառողների շահերի պաշտպանության ապահովմանը՝ պատշաճ որակի ոչ պարենային ապրանքի փոխարինման կամ վերադարձման ենթակա լինելու կամ չլինելու վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահանջի սահմանման միջոցով:
  - Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի և վաճառողի միջև հարաբերությունների հստակեցմանն ու տվյալ ոլորտում վաճառողների միջև հավասար մրցակցային պայմանների ապահովմանը:
  - Շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կանոնակարգմանը:
  - Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցների հստակեցմանը, միատեսակ կիրառման ապահովմանը և պատասխանատվություն կիրառող մարմնի հայեցողական լիազորությունների սահմանափակմանը:
  - Արտաքին գովազդի ոլորտը կանոնակարգող օրենսդրության հստակեցմանն ու կատարելագործմանը:
  - ՍՊԸ մասնակցին կամ ՓԲԸ բաժնետիրոջն ընկերության բաժնեմասերը կամ բաժնետոմսերը վճարելու պարտականությունից ազատելու հնարավորության ընձեռմանը, այդ թվում նաև՝ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցի եղանակով:
  - «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով ամրագրվել է, որ հայտատուն պետական տուրքը կարող է վճարել լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ նախկինում սահմանված 1 օրվա փոխարեն (ընդունվել է):
  - Օրենքների փաթեթ՝ քաղաքացիների ժամանցի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված ծառայությունների կազմակերպման կանոնակարգման և հասարակական կարգի պահպանության ուժեղացման նպատակով (ընդունվել է):

Ներդրումային միջավայր

- ՀՀ կառավարության 06.09.2018թ. N1012-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը: Օրենսդրական կարգավորումները կնպաստեն ՊՄԳ ոլորտում գործընթացների թափանցիկության բարձրացմանը, պետության համար ռիսկերի կանխատեսելիությանը, ռիսկերի բաշխման մեխանիզմների հստակությանը, ներդրումների ներգրավման համար տնտեսական նոր հնարավորությունների բացահայտմանը:
- Ընդունվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը, որը միտված է օրենքի դրույթները ԵԱՏՄ ազատ/հատուկ տնտեսական գոտիների և մաքսային օրենսդրության գործող դրույթներին համապատասխանեցմանը, ազատ տնտեսական

գոտիների ստեղծման և մեկնարկի ընթացակարգերի պարզեցմանը, շահագործողների ներգրավման ընթացակարգերի հստակեցմանը:

- 2018թ. ազատ տնտեսական գոտիներում ներգրավվել է 4 նոր շահագործող.
  - «Այյանս»՝ 2 շահագործող՝ հայտարարված 51.7 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 122 աշխատատեղով,
  - «Մերիդիան»՝ 1 շահագործող՝ հայտարարված 45 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 100 աշխատատեղով,
  - «Մեղրի»՝ 1 շահագործող՝ հայտարարված 44 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 102 աշխատատեղով:
- Ստեղծվել է նոր բարձր տեխնոլոգիական «Էկոս» ազատ տնտեսական գոտի Կոտայքի մարզում, որը կնպաստի ՀՀ նոր տեխնոլոգիաների և արդյունավետությանն ուղղված ներդրումների ներգրավմանը:
- Գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող հումքի և սարքավորումների ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն շրջանակներում հավանության է արժանացել 39 ներդրումային ծրագիր (նոր և ընդլայնվող), որոնց շրջանակներում նախատեսված է իրականացնել 403.8 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծել 3283 աշխատատեղ:
- Վավերացման գործընթացում են գտնվում «Ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը» Ճապոնիայի և «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը Կորեայի Հանրապետության հետ: Բանակցային փուլում է Սինգապուրի հետ «Ծառայությունների ազատ առևտրի և ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության համաձայնագիրը»:

Փոքր և միջին ձեռնարկատիրություն

- Մշակման փուլում է գտնվում Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2019-2023թթ. ռազմավարությունը:
- ՀՀ մարզերում և մայրաքաղաքում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ՝ ՀՀ հարկային օրենսգրքում առկա ՓՄՁ-ներին վերաբերող խնդրահարույց դրույթների վերհանման նպատակով: Համապատասխան առաջարկները ներկայացվել են Հարկային օրենսգրքի փոփոխությունների մշակման աշխատանքներն իրականացնող աշխատանքային խմբին:
- Մշակվել և քննարկման փուլում են գտնվում մի շարք իրավական ակտերի նախագծեր, մասնավորապես՝
  - «ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների ներմուծման, իրացման և սպասարկման դաշտի ազատականացում,
  - «Ձեռնարկատիրական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի նպատակն է ՀՀ-ում գործարարների շահերի պաշտպանության արտադատարանական համակարգի ստեղծումը՝ Ձեռնարկատիրական հաշտարարի ինստիտուտի ներդրման միջոցով,
  - «ՀՀ Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է ներմուծման ընթացքում դրոշմավորման ենթակա ապրանքների նկատմամբ դրոշմավորման պահանջի վերացումը:
- Դանիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների փորձագետների օժանդակությամբ 2018 թվականի հունիսին հրապարակվել է «Ավելացված արժեքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների չափերի» հրապարակումը 2016 թվականի համար, իսկ ս.թ. նոյեմբերին՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիրը:
- «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8979 աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝ 313,
- ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ՝ 314,
- տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 8010,
- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում՝ 64,
- ոլորտային աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում՝ 49,
- ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում՝ 229:

Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիայի կողմից

- Տրամադրվել է 54 վարկ շուրջ 2,470 մլն ՀՀ դրամի չափով, որից 26 վարկ շուրջ 1,424 մլն ՀՀ դրամի չափով սուբսիդավորվում է պետական աջակցության գործիքակազմի շրջանակներում (սուբսիդավորման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 131.4 մլն ՀՀ դրամ): Արտահանման ուղղվածություն ունեցող, մշակող արդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողներին տրամադրվել է 10 սուբսիդավորվող վարկ 896 մլն ՀՀ դրամ գումարի չափով, որոնց սուբսիդավորման գումարը կազմել է 93 մլն ՀՀ դրամ:
- Ֆինանսական վարձակալությամբ (լիզինգ) տրամադրվել է շուրջ 184 մլն ՀՀ դրամ արժողությամբ 23 միավոր գյուղտեխնիկա: Լիզինգների տարեկան տոկոսադրույքի 7 տոկոսային կետին համարժեք գումարը սուբսիդավորվում է պետության կողմից, ինչի արդյունքում շահառուների կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմում է 2%: Սուբսիդավորման ենթակա գումարը կազմել է շուրջ 34 մլն դրամ:

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ կողմից

- 2018 թվականի ընթացքում «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գործունեության արդյունքում 31 տնտեսվարող սուբյեկտների հետ կնքել է 592 ապահովագրական վկայագրիր, որոնց.
  - ընդամենը ապահովագրական գումարը կազմել է 7,851.16 մլն ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 173.2%,
  - հավաքագրված ապահովագրավճարը կազմել են 75.5 մլն ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 195.0%:

Մտավոր սեփականության պաշտպանություն

- Ստացվել է 105 գյուտի և 36 օգտակար մոդելի հայտ, որոնցից 135-ը՝ ազգային, 6-ը՝ օտարերկրյա հայտատուներից:
- Ազգային ընթացակարգով ստացվել է ապրանքային նշանների գրանցման 2147 հայտ (որոնցից 1556-ը՝ ազգային հայտատուներից): Գրանցվել են 1453 ապրանքային նշաններ (որոնցից 1039-ը՝ ազգային հայտատուների անունով): ՀՀ-ից ներկայացվել է միջազգային գրանցման 31 հայտ:
- Ազգային ընթացակարգով ներկայացվել է 57 արդյունաբերական նմուշի հայտեր (46-ը՝ ազգային հայտատուներից), որոնցից 53-ը ստացել են վկայագիր:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

- «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգը» (REX) ներդրվել է 2018թ. հունվարից: Արտադրողները և արտահանողները տեղական ծագման ապրանքները ԵՄ շուկա արտահանելու նպատակով կարող են գրանցվել REX էլեկտրոնային համակարգում, որը հնարավորություն է տալիս «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ արտահանումներն իրականացնել առանց ծագման երկրի Ա ձևի հավաստագրի՝ յուրաքանչյուր արտահանման դեպքում ներկայացնելով միայն ծագման հավաստման հայտարարություն: Մինչ այսօր կատարվել է 34 հայկական կազմակերպությունների խորհրդատվության տրամադրում և գրանցում «REX» համակարգում:
- Վաշինգտոնում կայացած Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների խորհրդի շրջանակներում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք քննարկում են առևտրի և ներդրումների, առևտրի

տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական, մաքսային, մտավոր սեփականության իրավունք, բարեփոխումներ աշխատանքի ոլորտում, բնապահպանության, պետական գնումների այլ ոլորտներին վերաբերող հարցեր:

- Ստորագրվել և ներկայումս վավերացման փուլում են գտնվում Իրանի հետ ազատ առեւտրի գոտու ձևավորմանն Ժամանակավոր համաձայնագիրը և Չինաստանի հետ առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը:
- ԵԱՏՄ շրջանակներում քննարկման և բանակցային տարբեր փուլերում են գտնվում Սինգապուրի Սերբիայի, Իսրայելի, Հնդկաստանի, Եգիպտոսի հետ ազատ առևտրի համաձայնագրերը:
- ԵԱՏՄ փոխադարձ առևտրում առկա ՀՀ-ի համար առավել զգայուն խոչընդոտների վերացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.
  - Հայկական ծխախոտ արտադրող և ծխախոտ ներմուծող կազմակերպությունների համար երկարաձգվել է չմակնշված ծխախոտը իրացնելու անցումային շրջանը՝ մինչև 2019թ. հունվարի 15-ը:
  - Առաջարկություն է ներկայացվել ԵԱՏՄ տարածքում վտանգավոր բեռներ, այդ թվում՝ ալկոհոլային խմիչքներ փոխադրող տրանսպորտային միջոցների լիցենզավորման միասնական կարգի մշակման և ներդրման վերաբերյալ, որի արդյունքում ՀՀ-ում գրանցված տրանսպորտային միջոցները կկարողանան անխափան տեղափոխել վերոնշյալ բեռները ՌԴ տարածք:
  - Հայկական գինի, կոնյակ արտադրող տնտեսվարող սուբյեկտների արտադրանքը Բելառուս արտահանելու դեպքում առաջացած խոչընդոտների վերացման ուղղությամբ՝ կապված Բելառուսում ալկոհոլային խմիչքների ներկրման բացառիկ իրավունքը պետությանը պատկանելու հետ, որը տարածվում է կոնյակի (մինչև 10 տարեկան կոնյակի սպիրտից պատրաստած), գինու և ալկոհոլային խմիչքների այլ տեսականու վրա, որպես ՀՀ-ի համար զգայուն խոչընդոտ առաջարկ է ներկայացվել ԵՏՀ նշված խնդրի լուծման և առկա սահմանափակումները վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար:
- «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում պետության աջակցությամբ ապահովվել է 7 միջազգային ցուցահանդեսներում 73 տնտեսվարողների մասնակցությունը:
- Երևանում կազմակերպվել է «Եվրասիական շաբաթ» 3-րդ միջազգային համաժողովը և ցուցահանդեսը, որին մասնակցել են ԵԱՏՄ անդամ պետություններից շուրջ 160 ընկերություններ: Համաժողովին մասնակցել են շուրջ 3000 մարդ:

Որակի ենթակառուցվածք

- Հավատարմագրման ոլորտը ԵՄ համապատասխան օրենսդրությանը ներդաշնակեցնելու նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել է համապատասխանության գնահատման մարմնի (ՀԳՄ) վերագնահատման գործընթաց, ինչը խրախուսելու է գործող ՀԳՄ-ների անաչառ, թափանցիկ և կոմպետենտ գործունեությունը:
- Չափման միջոցների (միաֆազ և եռաֆազ էլեկտրական հաշվիչների, ջրի հաշվիչների) համար սահմանվել են ստուգաչափման նոր, ավելի մատչելի սակագներ:
- Բանակցությունների արդյունքում մշակվել և ԵԱՏՀ է ներկայացվել ԵԱՏՀ Խորհրդի որոշման համապատասխան նախագիծը, որի համաձայն ԵԱՏՄ «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգում կներառվեն փոքր հիդրոէլեկտրոկայաններին ներկայացվող անվտանգության պահանջները:
- ՀՀ-ի կողմից ԵԱՏՀ առաջարկ է ներկայացվել խմելու հանքային ջրում բորի նորմավորման և անվտանգության ցուցանիշի շեմի բարձրացման ուղղությամբ, ինչը պայմանավորված է եղել միայն ՀՀ բնական առանձնահատկություններից: Առաջարկը ընդունվել է ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից և «Շշալցված խմելու ջրի, ներառյալ բնական հանքային ջրի անվտանգության մասին» Եվրասիական

տնտեսական միության տեխնիկական կանոնակարգում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

- Ընդունվել են 468 ստանդարտներ. ազգային (ՀՍՍ)՝ 12, միջազգայինից փոխակերպված՝ 13, Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝ 1, ռազմական (ՀՍՍ Ռ) – 4, միջպետական ստանդարտներ՝ 432, Ռուսաստանի Դաշնության՝ 6:

ԵՄ, ԱՀԿ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- 2018թ. սեպտեմբերի 25-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի առաջին նիստը, որի ժամանակ քննարկվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի Առևտուր և առևտրին առնչվող հարցերի մասի 12 ուղղությունների կիրարկման ճանապարհային քարտեզի նախագիծը, ներառված ուղղություններին առնչվող հարցեր, ինչպես նաև երկկողմ առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող այլ հարցեր:
- ԵՄ բյուջետային աջակցության 3 ֆինանսական համաձայնագրերի հատկացումների շրջանակներում 2018թ. վերջին ստացվել է 8 մլն եվրո գումար:
- 2017թ. և 2018թ. ԵՄ տարեկան գործողությունների ծրագրերի շրջանակներում բանակցվել, ստորագրվել և ուժի մեջ են մտել 5 տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրեր (52,165 մլն եվրո արժեքով), իսկ մեկ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագիր (31.250 մլն եվրո) գտնվում է հայկական կողմից ստորագրման փուլում:
- «GSP+» առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող 2018թ. մոնիտորինգի փուլի շրջանակներում պատրաստվել, ամփոփվել և 2018թ. հուլիսի 16-ին եվրոպական կողմին է տրամադրվել ՀՀ զեկույցը՝ մարդու իրավունքներին, աշխատանքային իրավունքներին, բնապահպանությանը և արդյունավետ կառավարմանն առնչվող 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացումը գնահատելու նպատակով:
- 2018 թվականի հունվարից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» («GSP+») արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ապրանքների ծագման հավաստագրման էլեկտրոնային նոր՝ «Գրանցված արտահանողների համակարգը» ((Registered Exporter System-REX): Արտադրողները և արտահանողները տեղական ծագման ապրանքները ԵՄ շուկա արտահանելու նպատակով կարող են գրանցվել REX էլեկտրոնային համակարգում: «Գրանցված արտահանողների համակարգի» (REX) շրջանակներում կատարվել է 35 կազմակերպությունների գրանցում «REX» համակարգում:
- Ամփոփվել են ՀՀ պետական կառավարման մարմիններից ներկայացված 26 Թվինինգ հայտերի ուսումնասիրումը և հաշվի առնելով ՀՀ-ԵՄ առկա համաձայնագրերը ընտրվել են թվով 9 ծրագրեր, որոնք 2019 թվականի ընթացքում նախապատրաստական և իրագործման փուլեր կմտնեն: Հանրային կառավարման բարեփոխումների ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի ներքո իրականացվել են 2 նոր Թվինինգ ծրագրերի հատկորոշման աշխատանքները:
- Շարունակվում են ՀՀ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված Թայեքս և Սոսյու ծրագրերը: Նախատեսվում է 2019 թվականի ընթացքում նախատեսել գործիքների իրականացման իրազեկման միջոցառումներ, որոնց նպատակը շահառուների համար առավել արդյունավետ ծրագրերի մշակման աշխատանքների ապահովումն է:
- Ընթացքի մեջ են ՀՀ-ում Սիգմա գործիքի միջոցով իրականացվող Հանրային կառավարման համակարգի սկզբունքների վերլուծության և գնահատման աշխատանքները:
- Ապահովվել է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրավորման 2014-2020թթ. երկրորդ շրջափուլի մեկնարկը: Իրականացվում է ծրագրայի հայտերի ընդունման փուլը:
- ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ընթացակարգերի համաձայն 2018թ ընթացքում իրականացվել է Հայաստանի առևտրային քաղաքականության երկրորդ վերաքննությունը, որի շրջանակներում պատրաստվել են ԱՀԿ քարտուղարության զեկույցը և ՀՀ զեկույցը: Զեկույցների ամփոփումն

իրականացվել է 2018թ. նոյեմբերի 20-ին և 22-ին ԱՀԿ Ժնևի կենտրոնակայանում՝ իրականացված աշխատաքնեները բարձր գնահատվելով ԱՀԿ քարտուղարության և ԱՀԿ անդամ երկրների կողմից:

- ԱՀԿ ընթացակարգերի համաձայն՝ իրականացվել է «Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին համաձայնագրի» Փաստացի ներկայացման մշակումն ու, համաձայնեցումը: Փաստացի ներկայացման ամփոփումը կայացել է 2018թ. նոյեմբերի 19-ին ԱՀԿ Ժնևի կենտրոնակայանում:
- Նախապատրաստվել և անցկացվել են 2 միջկառավարական հանձնաժողովների նիստեր (հայ-լեհական և հայ-չեխական):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- Զբոսաշրջության Կոմիտեի կողմից ոլորտի քաղաքականության կարգավորման համար մշակվում են մեխանիզմներ ուղղված համապատասխան իրավական դաշտի կարգավորմանը:
- Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքների համակարգման և վերջիններիս կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետ կառավարման համար՝ Կոմիտեի կողմից մշակվում է միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ինստիտուցիոնալ ձևաչափ, որը կնպաստի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացմանը՝ դրանք դարձնելով առավել թիրախային և պետական քաղաքականությանը համահունչ:
- Զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործման, առավել արդյունավետ և մանրամասն ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնելու և թիրախային նոր շուկաներ ձևավորելու նպատակով Կոմիտեն իրականացնում է ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի բարելավմանն ուղղած աշխատանքներ՝ նոր սերվերային ծրագրերի ներդրմամբ:
- Հայաստանի զբոսաշրջային արդյունքը դիվերսիֆիկացնելու և Հայաստանի զբոսաշրջային առաջարկը մեծացնելու նպատակով, իրականացվում են տարբեր զբոսաշրջային արդյունքի և երթուղիների մշակումներ, մասնավորապես.
  - Մշակվում են «Մետաքսի ճանապարհը Հայաստանում», «Ռուսական հետքը Հայաստանում», «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր», «Գինու երթուղի», «Արկածային Հայաստան», «Էկո երթուղի», «Հայաստանի համերը», «Քարանձավներից մինչև մեր օրերի քաղաքակրթություն» զբոսաշրջային արդյունքները
  - Մշակվում և քարտեզագրվում են քայլարշավային, լեռնադահուկային արահետները և 100-ից ավելի արկածային երթուղիներ ամբողջ Հայաստանում, ինչպես նաև ստանդարտացվում են վերջիններիս նշագրման ձևերը:
- Ստեղծվել է այցելուների տեղեկատվական կենտրոնների մեկ ընդհանուր ցանց, որը ներառում է 12 համայնքներում գործող կենտրոններ:
- Մեթոդական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել մի շարք փառատոների:
- Հայաստանի ճանաչելիության բարձրացման և համաշխարհային զբոսաշրջային քարտեզի վրա դիրքավորման նպատակով մասնակցություն է ապահովվել 6 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների, հրավիրվել են ավելի քան 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգորներ, իրականացվել է ակտիվ և թիրախավորված էլեկտրոնային մարքեթինգ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Պետական գույքի հաշվառման բազայում վերահաշվառվել է պետական սեփականություն հանդիսացող 9007 միավոր անշարժ գույք (ընդհանուր մակերեսը՝ 8,014,385.54 քառ.մետր), այդ թվում 14-ը՝ այլ երկրներում (ընդհանուր մակերեսը՝ 6885.9 քառ. մետր) և 3-ը՝ ԼՂՀ-ում (1922.0 քառ.մետր):
- Մշակվել և շրջանառության մեջ են դրվել պետական գույքի տնօրինման վերաբերյալ ՀՀ կառավարության 64 որոշման նախագիծ, որից 42-ն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից:

- ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքների սեփականաշնորհման մասին ՀՀ կառավարության որոշումը 34 ընտանիքի վերաբերյալ:
- Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով ներդրումային պարտավորություններ են ստանձնել 2 գնորդ, պետական գույքի օտարման պայմանագրերով՝ 23 գնորդ, անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրերով՝ 27 փոխառու, նվիրաբերության պայմանագրերով՝ 8 նվիրառու, վարձակալության պայմանագրով՝ 2 վարձակալ, փոխանակության պայմանագրերով՝ 2 կողմ:
- Լուծարվող կազմակերպություններում մարվել է շուրջ 36.9 մլն դրամ կրեդիտորական պարտք, որից՝ ՀՀ պետական բյուջե՝ 7.8 մլն դրամ, համայնքային բյուջե՝ 649.0 հազար դրամ, աշխատավարձի գծով՝ 24.8 մլն դրամ և այլ կրեդիտորական պարտք 3.6 մլն դրամ:
- Իրականացված գործունեության արդյունքում ստացված դրամական միջոցները կազմել են 3,794.8 մլն դրամ (աճը 2017թ. նկատմամբ կազմել է 151.5%), որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 2,938.3 մլն դրամ (աճը 2017թ. նկատմամբ կազմել է 135.5%):